Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021: «Լոռու մարզում հանրային ավտոբուսի տրամադրման» ծրագրի եզրափակիչ արարողություն

2022թ. օգոստոսի 29-ին Դեբեդ գյուղում տեղի ունեցավ «Լոռու մարզում հանրային ավտոբուսի տրամադրման» մինչև 91,206 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (ՖՏ 2021) համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը։

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Ճապոնիայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Արեգ Հովհաննիսյանը, Լոռու մարզպետի տեղակալ պարոն Հովհաննես Ավետիսյանը, Փամբակի քաղաքապետ պարոն Սուրեն Կոստանդյանը. «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն պարոն Կորյուն Խաչադուրյանը, ինչպես նաև այլ շահառուներ:

Ծրագրի նպատակն էր բարեփոխել Լոռու մարզում տրանսպորտային ծառայությունների որակը և բարելավել մարզի բնակիչների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը։ Վանաձորից դեպի Դսեղ երթուղու համար ավտոբուսի տրամադրման արդյունքում, ավելի քան 5000 շահառու, ներառյալ հաշմանդամություն ունեցող 50 բնակիչ կարողանալու են օգտվել ավելի լավ տրանսպորտային ծառայությունից։